ԿՈԱԼԻՑԻՈՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ք. Երևան «04» հոկտեմբեր, 2018

«Կոմպասս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն ՀԿ-ն, «ՀԿ Կենտրոն» ՔՀԶ ՀԿ-ն, «Դիլիջանի երիտասարդների համագործակցության կենտրոն» ՀԿ-ն և «Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն» ՀԿ-ն, ի դեմս Կոնսորցիումի համակարգող «Կոմպասս» ՀԿ նախագահ Ղարիբ Հարությունյանի, մի կողմից, և «Համայնքների Ֆինանսիստների Միավորում» ՀԿ-Ն, «Քոլսոն երիտասարդական կենտրոն» ՀԿ-Ն, «Առաջընթաց» ԵՀԿ-Ն, «Ռեգիոնալ Զարգացման Համագործակցություն» ՀԿ-Ն, «Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ-Ն, «Գեղարեգ» կրթամշակութային երիտասարդական ՀԿ-Ն, «Համայնքի Զարկերակ» ՀԿ-Ն, «Աժդահակ» համայնքային զարգացման ՀԿ-Ն, «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-Ն, «Լոռու զարգացման կենտրոն» ՀԿ-Ն, «Երիտասարդ ժուռնալիստների ասոցիացիա» ՀԿ-Ն, «Արդյունավետ կառավարում և համայնքային զարգացում» ՀԿ-Ն, «Կանայք հանուն զարգացման» ՀԿ-Ն, «Խորան Արդ ինտելեկտուալ կենտրոն» ՀԿ-Ն, «Սոցիալ-տնտեսական քաղաքականության տարածաշրջանային հետազոտությունների ինստիտուտ» ՀԿ-Ն, «Գնիշիկ» Միջհամայնքային Բնապահպանական Հիմնադրամը, «Աշխատանք և հայրենիք» ՀԿ-Ն, «Քմյունիթի Սենթր ֆոր Դիվելոփմենթ» տարածաշրջանային համագործակցության» ՀԿ-Ն, «Երիտասարդ Կոթի» ՀԿ-Ն, «Գորիսի մամուլի ակումբ» ՀԿ-Ն, ««ԳՈՒՄ» Գործընկերություն և ուսուցում» ՀԿ-Ն, «Գորիսի զարգացման կենտրոն» ՀԿ-Ն, «Համայնքային զարգացման նորարարական կենտրոն» ՀԿ-Ն, ««Արմաշ» գյուղական համայնքների աջակցման և զարգացման կենտրոն» ՀԿ-Ն, «Հայ Առաջադեմ Երիտասարդություն» ՀԿ-Ն, «Քաղաքացիական զարգացման և համագործակցության հիմնադրամը», «Տարածքային զարգացման և հետազոտությունների կենտրոն» ՀԿ-Ն,

«Հայկական Կարիտաս» ԲՀԿ-Ն, «Էներգախնայողության աջակցման հիմնադրամը», «Բարեպաշտ սերունդ» հիմնադրամը և «ՕքսԵՋեն» հիմնադրամը մյուս կողմից,

- **ԿԱՐԵՎՈՐԵԼՈՎ** քաղաքացիական հասարակության սուբյեկտների դերը Հայաստանի համայնքների զարգացման և կառավարման գործում,
- **ԳԻՏԱԿՑԵԼՈՎ** «Խելացի համայնքների» ստեղծման և ներդրման կարևորությունը արդյունավետ զարգացող և կառավարվող համայնքների ստեղծման գործում,
- **ՄԻԱՄՆԱԿԱՆ** դիրքորոշում ունենալով մասնակցային մոնիթորինգի և ջատագովության միջոցով համայնքային խնդիրների արդիականությունը բարձրաձայնելու և համապատասխան շահագրգիռ կողմերի ներգրավման միջոցով բարենպաստ նախադրյալներ ստեղծելու գործում,

կնքեցին սույն Հուշագիրը հետևյալի մասին.

1. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Կողմերն ընդունում են հետևյալները՝ որպես համագործակցության սկզբունքներ.

- Համագործակցության ընթացքում Կողմերն առաջնորդվում են ժողովրդավարության, համապատասխանատվության, համագործակցության, թափանցիկության և հաշվետվողականության սկզբունքներով:

2. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ ԵՎ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

Կողմերն ընդունում են հետևյալները՝ որպես համագործակցության ձևեր և շրջանակներ.

- Համատեղ հետազոտությունների, փորձագիտական հանդիպումների, քննարկումների, գիտաժողովների, հետազոտության ներկայացումների, և այլ միջոցառումների կազմակերպում ու իրականացում, որոնք ուղղված են ՀՀ-ում համայնքների զարգացմանն ու կայացմանը:
- Կողմերի ունեցած տեղեկատվական ռեսուրսներից, մասնագիտական գրականությունից և նմանատիպ այլ ռեսուրսներից ազատ օգտվելու հնարավորություն,
- Կողմերի փորձագետների փորձի փոխանակման հնարավորություն,

- Համատեղ ներկայացվող ծրագրերի պատշաճ իրականացման, որակի ապահովման համատեղ պատասխանատվություն:

3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- Սույն Հուշագրով համագործակցությունը համակարգվում և վերահսկվում է Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից:
- Սույն Հուշագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է անժամկետ, Հուշագրի փոփոխությունները կատարվում են գրավոր կերպով: Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ Հուշագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք կհամարվեն Հուշագրի անբաժանելի մասը:
- Հուշագիրը կնքված է հայերեն լեզվով, մեկ օրինակով: Յուրաքանչյուր Կողմին տրվում է Հուշագրի կրկնօրինակի մեկական հավասարազոր օրինակ:

ՀՈՒՇԱԳԻՐ